



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 49

ՏՈՒՆԱՐԱՐ

3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ԳՈՒՍՈՒՍՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 ՂԲՀ.	Տարեկան	54 ՂԲՀ.	Տարեկան	42 ՁԲ.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳՍՈՒՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԼՆԿ

ՄԵԾ ՎԱԶԱՆԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, շէրալ Պէյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուի ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քի՛ Կ. Պոլիս, եւ քի՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Մանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բաքիի 1900 Արուեստանաճեղեսին մէջ ամենեւնի բարձր պարգէտին արժանացած են:


Հատր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرتبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեի թիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեխանիկ
կը գտնուի

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բոլորովին աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
ՍԱՆՆԱԿՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|--|
| ՌԵՐԱ. | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | 2 արշը Պոյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն


Մասնաձեւեր գաւառներու բոլոր ֆալաֆներու մեջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւղօղլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻԷՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ


Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԻՆՉԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ



ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք եւ
կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ չոգե-
նաւի՝ եւ առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11 — 16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր ներկայացուցիչ

Գ. Ֆ Է Ր Ա Տ Ե Ա Ն



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 49

ԶԱԲԱԹ

3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԳԱՅՈՒԹԻՒՆ

Հոսանք մը, ԼԵՒՈՆ ԱՒԱԳԵԱՆ: Դպրոցականները. — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՅ: Բաց
նամակ: Օր. Պեպրիս Շահինեանին: — ԲԵՐՈՒԶ ԶԱՏԻԿԵԱՆ: Վերջապէս... (ՈՏԱՆԱ-
ւոր) ՍՈԿՐԱՏ ՍԱՐԲԱՖԵԱՆ: — Արդարացում... Յ. Աշխարհին: — Ս. ԵՐԿԱՆԵԱՆ:
Պատկերդ. — ՀՐ. Յ. ՄՈՄՃԵԱՆ: Պզտիկ գրագէտներու գրելու կերպը: — ՍԵՂԻՐԱԿ ՄԱՎ-
ԵԱՆ: Աղուոր (Ֆանթեզի). — Գիշերային Զգոսանքներ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: — Առանձին
գիտելիքներ: Ծափուան լուրեր:

ՀՈՍԱՆՔ ՄԸ

Յաւիտեանական, անվերջանալի խնդիրը՝ վարժապետներու և վարժուհի-
ներու խնդիրներէն ետքը՝ սա՛ կըլերականներուն հարցն է ապահովաբար, որ
չի՛ հիննար երբէք, և չի՛ դադարի բնաւ միտքերը իրմով գրաւուած պահէլէ
ա՛յնչափ ատեն, որչափ չե՛ն թերեւս կրթական և ուրիշ ինքնին կարեւոր և
անհրաժեշտ եղող հարցերը:

Մեր օրաթերթերը շարունակ լեցուն են ամէն օր քահանայի, առաջնոր-
դի, վարդապետի և տակաւին ուրիշ շա՛տ մը տարբեր ու զանազան տիրա-
ցուական խնդիրներով, որոնք այլակերպ ձեւերու և միջոցներու տակ ի յայտ
կուգան, մի՛շտ ատելութեան, անձնական կոյր նախանձի թաքուն նպատակը
ունենալով իրենց ծալքերուն տակ, և ասիկա ամէ՛ն ատեն ալ հաւասարապէս:

Բայց ա՛լ վարժուեցանք անգամ մը տիրացուութեան, և այսօր մեր ա-
կանջներուն խորթ չի՛ ճնշել այլեւս լսել՝ օրինակի համար թէ՛ այսինչ քաղա-
քին առաջնորդը՝ չ՛ստորնանալով մինչև տեղւոյն մենծ-աղաներուն քմահաճոյ-
քին համակերպելու, հրաժարեր է իր պաշտօնէն, և հետեւաբար նոր ընտ-

ըութիւն պիտի կատարուի, պայմանաւ որ՝ նորընտիր առաջնորդը, ո՛վ որ ալ ըլլայ, չոյէ՛ գգուէ՛ տեղւոյն մենծ-ազաներուն քմահաճոյքները, և կամ թէ՛ այսինչ գիւղին տէրտէրը ապօրինաւոր պսակ մը կատարած ըլլալուն համար տեղացիները գիմում ըրեր են Պատրիարքարան՝ պատժական և կամ ո՛ր և է տնօրինութիւն մը խնդրելով զանցառու քահանային նկատմամբ:

Եւ տակաւին կրնանք շարքը երկարել ասոնց, նմանօրինակ կղերային զեղծութիւններու այլագունակ, բազմազան մէջբերութիւններով, սակայն չեմ գիտեր թէ՛ պէտք կա՞յ անոնց, որոնք անպէտ ու աւելորդ նկատուելու հանգամանքէն զատ ոչինչ պիտի կրնային ունենալ իբր նշանակելի առաւելութիւն:

Սակայն խնդրեմ, ի՞նչ է եղածը:

Առաջնորդի, վարդապետի, տէրտէրի այս ի՛նչ բարդ, կնճռոտ խնդիրներ են, որոնք կուգան շարունակ դիզուիլ ու աւելնալ Վարչութեան սեղանին վրայ, անհատնում հոգ ու անվերջ զբաղում առթելով անոր, որ արդէն գըլուխ վերցուցած չ'ունի նմանօրինակ անճահ, անպատուաբեր խնդիրներու տաղտուկէն:

Բայց հաւատացէ՛ք որ ամօթալի է ասիկա, և վստահ եղէք մի և նոյն ատեն ալ որ ո՛չ մէկ համայնք մերինին չափ ծանրաբեռնուած է առաջնորդական, վարդապետական զեղծութիւններու և ապօրինաւորութիւններու կնճռալից հոգերով:

Կրօնասէր, կրթասէր համայնքն այն չէ՛ ապահովաբար որ կ'ըբաղի շարունակ, մեքենայի մը յաջորդականութեամբ կղերային անվերջ, անհատնում զեղծութիւններով, և կամ քարոզչական խնդիրներով: Ասիկա պիտի չըմանէ՞ր քիչ մը անճիւղ և անտերև ծառի մը՝ որ չի՛ ուռճանար երբէք, և տարիններու ընդ երկար հորովումին մէջ ո՛չ իսկ զգալի զարգացում մը կ'ունենայ իր ծլարձակումին մէջ, քանի որ ճիւղերը, բո՛ւն զարգացնող, անճյնո՛ղ ազդակները մերկացուցած են զինք:

Բայց վերջ մը դնելու է միանգամ ընդ միշտ սա՛ կղերամուկ հոսանքին, թօթափելու է սա՛ տիրացութիւնը մեր ուսերէն, քիչ մըն ալ ուշադրութիւն դարձնելու համար վարժարաններու ու որբանոցներու նիւթական և կրթական բազմապահանջ հոգերուն շուրջը, որոնք ամենէ՛ն աւելի կարեւոր են և անմիջական պէտք ունին անոր:

Երեւակայեցէք թէ՛ ո՛րքան մեծ, անհուն բտրիքներու օգուտներ դուրս պիտի գային, եթէ այդ կղերային խնդիրներու տրուած հոգատարութիւնը քիչ մըն ալ դէպ ի կրթական յարկերը դարձուէր, որոնք գրեթէ լքուածի, մեկուսացուածի դիրք մը ունին այսօր, ինքնին մէյմէկ անարդիւնք, անորոշ ուղղութիւններու մէջ տապալակող հաստատութիւններ դառնալով, առանց նշանակելի բացառութեամբ մը:

Բայց, ի՛նչ որ ալ ըլլայ, ամէն պարագայի մէջ վե՛րջ մը դնելու է այս կղերամուկ հոսանքին, թօթուելու է սա՛ տիրացութիւնը ուժգնօրէն:

ԼԵՒՈՆ ԱՒԱԳԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԵՐՇ

Այս օր չ'իայ մէկը որ անգիտակ ըլլայ սա ճշմարտութեան թէ՛ կեանքի ամենէն էական պայմանն է ուսումը եւ կրթութիւնը:

Երբ տղայ մը իր իմացականութեան տէր կ'ըլլայ, երբ խորհելու եւ տրամաբանելու աստիճանը կը թեւակոխէ՝ զինքը վարժարան կը զրկեն ալ: 10-15 տարի ամբողջ վարժարանական կեանք մը կ'ապրի ան: Այս ժամանակամիջոցին ո՛րքան անոր կրթութեան փոյթ՝ ա՛յնքան մը աւելի ալ պէտք է առողջական վիճակին հոգ ու խնամք տանի: Ահա՛ քանի մը տարիներէ ի վեր, եւրոպական վարժարաններուն մէջ այս կարեւոր խնդիրը նկատողութեան առնուած է: Դասերու ծրագիրէն առաջ, պիտի աւանդուին աշակերտներուն, ասոնց առողջական վիճակին վրայ կը խորհին, կը մտածեն թէ ի՞նչ միջոցներ գործադրել պէտք է օրուան մը տաւորական աշխատութիւններէն յետոյ հանգիստ տալու այդ մատաղ հոգիներուն, որոնք այնքան շատ պէտք ունին անոր երբ մարմինն խոնջած, ուղեղին յոգնած է:

Պերլինի հանդէսներէն մէկը, դպրոցի աշակերտներուն հանգստութեան խնդիրը իր առողջապահական տեսակէտէն քննելով՝ կարգ մը կարեւոր ծանօթութիւններ հրատարակած է:

Մեծ կամ պզտիկ, օրուան ճգնաժամ աշխատութենէն ծնունդ առնող խոնջէնքը փարատելու, մարմնական ոյժերը վերստանալու միակ միջոցն ու պայմանը՝ քունն է: Ինչպէս որ կերտարուիլը բնական պահանջ մ'ըլլալով, անոր ընտրութեան ու սննդաւորութեան հոգ կը տարուի, այնպէս ալ քնանալուն մասնաւոր պայմանները եւ որէնքը կան՝ որոնց հարկ է ուշադիր ըլլալ: Այնդիսի քուն մը քնանալ՝ որ ճշմարտապէս, կատարելապէս մարմինն օգտակար ըլլայ՝ ասիկա խիստ դժուար գործ մըն է եղեր:

Գերման հանդէսին հրատարակած յոդուածին մէջ կը կարդանք թէ. «Դպրոցականներուն շատերը, գրեթէ միշտ իրենց ծնողքին անսալով, տունին մէջ պէտք եղա-

ծէն աւելի կ'աշխատին՝ երբ տակաւին, դպրոցէն նոր տուն դարձած, իրենց միտքը հանդարտած չէ, որով աւելի յոգնեցնելով ուղեղը՝ հիւանդութիւններու ենթակայ կ'ըլլան: Մտնաւանդ ջղային, տկարակազմ ու անարիւն դպրոցականներուն համար շատ վնասաւոր թէ ծայրայեղ աշխատութիւնը»:

Կազմով փափուք տղաքներուն, դպրոցին աշխատութիւններէն յետոյ, ո՛չ թէ միայն տունին մէջ պէտք չէ՝ աշխատեցնել՝ այլ մասնաւորապէս անոնց հանգստութիւնը ապահովել ջանալու է: Այն մտաւորական ու մարմնական հանդարտութիւնը՝ — որուն պէտք ունին անոնք — անհրաժեշտաբար շնորհելու են ծնողները իրենց զաւակներուն, հակառակ գործելով անոր՝ կ'ունենան մըշտընջենաւորապէս յոգնած ուղեղով տղաներ, անբարգաւաճ ու ազազուն:

Բնապէս նիհարակազմ տղան՝ առաւօտեան դասերը աւարտելէ յետոյ՝ հանգստութեան կարօտ է: Սակայն այս հանգստութիւնը՝ կէս կամ մէկ ժամ պարտեզին մէջ խաղով, եւ կամ խօսասրահին մէջ զբօսնելով չըլլար. մարմինն հանգիստը հանդարտօրէն պառկելով կ'ըլլայ: Շատ բնական է որ վարժարաններուն մէջ ննջարանի նմանող վայրեր պատրաստելը դժուարագոյն գործ մըն է, մանաւանդ ցորեկեայ դպրոցներուն համար, բայց եւ այնպէս այս դժուարութիւնը անկարելիութիւն չէ՛, ու պըզտիկ զոհողութիւններով կարելի է վարժարաններուն մէջ սեղաններ պատրաստել այն ձեւով՝ որոնց վրայ աշակերտները կարող ըլլան ժամի մը չափ հանգիստ պառկիլ: Դպրոցականներուն տրուելիք այս թոյլտուութիւնը՝ առողջապահական տեսակէտով անհրաժեշտ կը համարուի: Այս միջոցը ամենուն համար ալ առողջապահական, ամենուն համար ալ կարեւորագոյն պարագայ մըն է:

Տկարակազմ տղաներուն իրենց տունին մէջ ալ մասնաւոր դասեր տալու պարագային գալով, պէտք է գիտնալ թէ՛ ասոր հետեւանքը խիստ ծանր ու գէշ է: Անոնք վարժարանի աշխատութիւններէն երբ տուն կը դառնան՝ միայն մարմինն չէ՛ որ յոգնած է, այլ ըմբռնելու, խորհելու ոյժերն

ալ տկարացած, սպառած է, որով անոնց այս մտաւորապէս ու Ֆիզիզապէս տկար վիճակին մէջ աշխատցնելը՝ իր տխուր արդիւնքները կ'ունենայ: Տղան վարժարանէն դառնալէ յետոյ կէս կամ մէկ ժամ հանգարտ մնալը ամենակարեւոր է:

Հանգիստի պահուն հորիզոնական դիրքը ամենէն նպաստաւորն է: Սխալ հասկցուած քաղաքավարութիւնով մը, երբ տղան իր դասատուին դէմ նստի՝ փոխանակ պառկելու, հանգիստը կատարեալ չըլլար, որով սպասուած արդիւնքը ձեռք չը բերուի: Պառկած դիրքի մէջ արեան շրջանը աւելի կանոնաւոր ընթացք մը կ'ունենայ, որով խոնջէնքը աւելի շուտ փարատելով՝ խորհելու եւ ըմբռնելու կարողութիւնը աւելի շուտ կը վերադառնայ, զօրաւոր ու օգտաբաշխ կը դառնայ: Այս խորհրդածութիւններով է որ կը համոզուինք թէ՛ ցորեկի ճաշէն յետոյ՝ դպրոցի տղաներուն քիչ մը ժամանակ պառկելը ամենաօգտակար սնունդի մը ազդեցութիւնը ունի: Ասով մարսողութիւնը կը դիւրանայ, ու տղան հանգստանալէ յետոյ աւելի եռանդուն, աւելի աշխատող ու մտացի կ'ըլլայ: Մինչդեռ ասոր հակառակը գործելով, անոնց միտքը միշտ յոգնած կը մնայ ու աւանդուած դասերը ապարդիւն կ'ըլլան: Դպրոցականներուն համար յանձնարարուած այս հանգիստը շնորհելով՝ առողջական եւ ուսումնական կրկնակ օգուտները ձեռք կը բերուին:

Կը տեսնենք որ արդի մանկավարժները միայն դպրոցականներուն առողջական վիճակը պահպանելու չեն միտիր, այլ կ'աշխատին անանկ միջոցներ գտնել՝ որով վարժարանականներուն ըմբռնողութիւնը զօրանայ: Մասնագէտ մանկավարժներուն եւ դպրոցի տնօրէններուն, վերջին ատեններս, հրատարակած ուսումնասիրութիւններուն յենլով, կը հասկնանք թէ՛ աշակերտի մը յարմարութիւնը որոշելով ինչ արդիւնքներ կը ստացուին:

Դասարանի մը մէջ շատ մը ուսանողներու նոյն դասերը կ'աւանդուին, սակայն անոնց մէջէն իւրաքանչիւրը տարբեր առանձին ճիւղերու մէջ յաջողակութիւն կը ցուցնէ: Վարժապետները պարտաւոր են յատկութիւնները ճշդել ու որոշել, ու անոր համեմատ ոյժ ու խնամք չռայել իւրաքանչիւր աշակերտի:

Ուսանող մը որ մեծ յաջողակութիւն ստացած է մաթեմատիկական գիտութիւններու մէջ, եւ շատ բնական է որ կարող ըլլայ ներհուն ճարտարագէտ մը ըլլալ, զայն թողու որ, ծնողական ստիպումներու վրայ, բժշկական աշխատութիւններու հետեւի՝ ճշմարտապէս տխուր արդիւնքի պատճառ ըլլալ կը նշանակէ:

Դաստիարակներն են որ ամենէն աւելի լաւ կրնան ճանչնալ այն յատկութիւնները՝ որոնք կը գտնուին տղուն մէջ, ու անոնց պարտաւորութիւնն է միայն ծանօթացնել զանոնք ծնողներուն: Ասիկա թէ՛ տղուն եւ թէ՛ ծնողին համար օգտակար է:

Վերջապէս, մանկավարժութիւնը ամենակարեւոր գիտութիւն մըն է. ամէն մանրակրկիտ քննութեան արժանի գիտութիւն մը:

ՍՇՈՏ ՄԱՍԱԹԵՆՑ

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՄԵՌԻԿ

ԵՂՈՒԱՐԴ Գ. ԳԱՅՍԵՐԵԱՆԻ

Չորեքշաբթի Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ յուշարկաւորութիւնը վաղամեռիկ Եղուարդ Գ. Գայսերեանի, Որդի Ազն. Գրիգորէֆ. Գայսերեանի:

Տխուր հանդէսին կը նախագահէր Տ. Մկրտիչ Արքեպ. Վեհապետեան իր շուրջն ունենալով Տ. Տ. Ներսէս Դանիէլեան, և Գարեգին վարդապետները, ինչպէս նաեւ բազմաթիւ քահանաներ և դպիրներ:

Եկեղեցական արարողութիւններէն վերջնախագահ արքագանը հակիրճ այլ ազդու դամբանականով մը վեր առաւ վաղամեռիկ հանգուցելոյն ձիրքերը և բարեմասնութիւնները:

Դամբանականէն վերջ թափուր կազմուելով դադալը առաջնորդուեցաւ տեղւոյն գերեզմանատունը ուր ամփոփուեցաւ մարմինը:

«Հանրագիտակ» կը փութայ իր ցաւակցութիւնները յատնել այս տխուր առթիւ Ազն. Գրիգորէֆ. Գայսերեանի, Մեծայարգ Եղբարց եւ Գայսերեան և Տիւրիզեան ընտանիքին բոլոր պարագաներուն:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ՕՐ. ՊԵՏՐՈՍ ՇԱՀԻՆԵԱՆ

Թե օրիորդ մը, ո՞ր տարիքի մեջ
պէտք է անուսնանայ, եւ ինչո՞ւ :

Ազնիւ Օրիորդ,

Նախ, պարտ անձին կը համարիմ շնորհաւորել զՁեզ, Ձեր այն ինքնաբեր աշխատակցութեան համար, զոր կը նուիրէք «Հանրագիտակիս շարաթներէ ի վեր» :

Թէեւ անձամբ զՁեզ ճանչնալու պատիւը ունեցած չեմ, սակայն թոյլ տուք ինձ գնահատել Ձեր Օրագիրը, իր առկուն նիւթերուն, սահուն ոճին ու շինիչ հանգամանքին համար :

Օրագրութեան նա մանաւանդ պարբերականներէն ումանց մէջ ատենէ մը ի վեր մշակուող այս ճիւղը, որուն հետեւողները կամ նմանելու փորձեր ընողները մատի վըրայ չէ որ կը համրուին, ա՛յնքան շեղեցան, ա՛յնքան ստորնացուցին որ, զանոնք կարգաւ — գէթ ինծի համար — քիչ մը քիչ տաղտուկ եւ ցանձրոյթ չէ որ կը պատճառէ :

Ծաղկոցի գրութիւններէն եւ անոնց ընդունարանէն հեռու, մեր սիրելի «Հանրագիտակիս» Ձեր աշխատակցութիւնը, կը մատնէ Ձեր նկարագիրը ազնիւ Օրիորդ, թէ մաքուրին, լաւին եւ անկեղծ ճշմարտութեան տարրը ունի իր մէջ, Ուրախ եմ :

Ձեր վերջին Օրագիրին մէջ հարց կ'ընէք գրչի աշխատակցութիւններու թէ՛ «Օրիորդ մը ո՞ր տարիքին պէտք է ամուսնանայ եւ ինչո՞ւ» : Իրր համակիր ձեր բոլոր գրուածքներուն, չեմ ուզեր լուս անցնիլ Ձեր հարցումին վրայէն, եւ կը փութամ ըստ իմ կարողութեան պատասխանել, ոչ թէ մետաքս թաշկինակի մը ակնկալութեան, զոր խօստացած էիք նուիրել, այլ լոկ պատասխանելու համար ընկերական կամ ընտանեկան կարեւոր հարցի մը, քաջ գիտնալով որ կարծիքս յետինը պիտի ըլլայ հրատարակուած Թերուն մէջ անվրէպ :

Իմ մասին, ես պիտի փափաքէի որ աղջիկ մը իր 25-30 տարիքին մէջ ամուսնանար : Ասիկայ պատգամ մը չէ, ոչ տլ ընդհանուր օրէնք մը, այլ այնպէս կը կարծեմ

թէ այդ հասուն տարիքին մէջ ամուսնացող օրիորդ մը, թէ ինք հանգիստ կ'ընէ եւ թէ ամուսնոյն հանգիստ ընել կուտայ, քանի որ կատարելութեան հասած տարիքին մէջ է որ պիտի մտնայ ընտանեկան կեանքը :

Թողլով պահ մը գաւառի սովորոյթը, որ կը պահանջէ, կանուխ շատ կանուխ կապել աղջիկ մը ամուսնոյ մը լուծին, սակայն պէտք է ըսել թէ՛ մեր մէջ ոչ նուազ փութկոտութիւն մը կը տեսնուի մանաւանդ մայրերու մօտ նոյն բանը կրկնել, այսինքն շուտ ամուսնացնել իրենց աղջիկները :

Արդ, երեւակայեցէք աղջիկ մը հազիւ տասն եւ չորս տասն եւ հինգ տարեկան որ բռնի մայր անունը դրոշմել կուտան ճակտին, ճիշդ այն տարիքին մէջ, ուր մարմինը դեռ նոր սկսած է ուճանալ, կազդուրուիլ եւ ստանալ իր ֆիզիքական զարգացումը : Օրիորդը իր տկար եւ թերի վիճակին մէջ կը յանձնուի ամուսնական կեանքին ուր կը խամրի, եւ կը տուժէ թէ բարոյապէս եւ թէ ֆիզիքապէս : Դեռ կեանքին իսկութեան վրայ զաղափար չի կազմած, ինք ուրիշ կեանքի մը ծնունդ կուտայ, եւ ալ կը մոռնայ ինքզինքը, եւ իր պարտականութիւնները, աշխատութիւնը բոլոր կը նուիրէ իր ձագուկին, անոր համար կը հաւի, կը տկարանայ եւ կանիծէ իր բաղդը, կարծելով թէ, ամուսնութիւն ըսուած բանը բարոյական մահն է աղջկան մը : Մինչդեռ նոյն պարագան երբ հասուն տարիքին մէջ պատահեր, անիկայ շատ անուշ վերաբերում մը պիտի ունենար թէ անձին, թէ ամուսնոյն, եւ թէ իր հոգեհաստորին նկատմամբ :

Բայց ուրախ եմ, տեսնելով որ ըրկարար դրամոթիտը այսօր պատուար մ'է մայրական փութկոտ գաղափարին առջեւ, որով մեր մայրերը, հակառակ իրենց փափաքին, չեն կրնար շուտ ձեռքէ հանել իրենց բեռը՝ աղջիկը : Երբեմն չարիքները բարիք կը ծնին, այս կարգէն է նաեւ օրուան երիտասարդներու դրամի պահանջկոտութիւնը, որուն շնորհիւ մեր օրուան օրիորդները տակաւ կը հասունանան ... կըլլայ ալ որ անցնին :

Իմ մասին պիտի ուզէի որ, իմ ամուրի քոյրերս համբերութիւնը ունենային իրենց 25-30ին մէջ ամուսնանալու, թերեւս այս

գաղափարը խորթ հնչէ քիչ մը իրենց ա-
կանջին, սակայն ճշմարտութիւնը այս է,
պէտք է կատարելութեան հասնիլ Ֆիզիքա-
պէս թէ բարոյապէս, մտնելու համար ա-
մուսնութեան դռներն ներս, տոկալու համար
անոր բազմատեսակ փորձութեանց եւ դժ-
ուարութեանց: Աս կը պահանջէ մարմնական
կազմը, եւ բարոյականը:

Քոյոյ

ԲԵՐՈՒՋ ԶԱՏԻԿԵԱՆ

ՎԵՐՋԱՊԵՍ

Երբ երագով մը կ'այրհի, սուրբ ու կոյս
Գրիկոյ հեռու, srsուս զբխուր ու մոյոր,
Մոնցոյ, զոռ ծովուն աշեաց սասկայոյց
Խորհրդաւոր հարցում մ'ըրի անցեալ օր.
«Տեսա՞ր միթէ Զանի, զոր ես կը պաշտեմ».
Բայց ծովը լուռ, իր աշիքը սասկոտքեաւ
Առաւ զընաց մոռնցելով դառնադիւ,
Այլ ականջիս դեռ կը շփեմ, ձայն մը բաւր:

Յետոյ դարձայ ծաղիկներուն մարգերուն,
Զորոնի կոյսեր կը կոխկրոսեն մերք ընդ մերք,
Ուր հրեշտակներ յոյսերու մէջ պըսպըղուն
Կը քրոջքսին՝ գեղ թիթոսանց հետ յուսաբերք:
«Հոսկե անցա՞ւ Ան, զոր ես յոյս սիրած եմ»,
Ըսի վախով, զի չխոսչին այդ ծաղկունի,
Մինչ յասմիկներ, մանուշակներ դեմ առ դեմ,
Գրչուխ կախած սուգըս կուրան անաղմուկ:

«Զմեռն՝ աւա՞ղ՝ մօտ է», ըսեն մունջ ու լուռ՝
Խօսուն տեսով, զոր ես միմակ կ'զգամ արդ,
«Մենի բորմեցանի, խորշումեցանի եւ մեր բոյր
Անցաւ զընաց, գեղեցկութիւնն ալ մեր վարդ»:

Յետոյ իջայ վեա խրդմին խորն իմ մըթին,
Որ քու սիրոյդ սասկոտքիւնով կը ցանցուէր,
Եւ հոն տեսայ սեւեր հագած srsմագին
Քու պաւկերդ, անմեղ կոյսի մը պաւկե՛ր...
Ու մեսսֆէ քաշկիւնակով քու աղուոր,
Յորդոյդ աղի արցունքներըս սրբեցի,
Բայց գիտեմ թէ քու անեծքներդ քիւրաւոր
Պիտի շանթեն, պիտի քաւացնեն օր մ'իմծի:

Բերա

ՍՈՎԵՐՍ ՍԱՐԴԱՏԵԱՆ

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ...

Յ. ԱԼՓԻԱՐԻՆ

Բաղդը այնպէս մը բերաւ որ՝ կիրակի
օր դարնային գեղեցիկ օգով մը մեր անգու-
գական . . . Երգիծարանին հանդիպիմ
Քօրտէլիօյի շոգենաւին մէջ, այսինքն ինչ-
պէս հասկըցաք՝ Տիար Յ. Ալփիարին . . .
Առաջին անգամն է որ կը հանդիպիմ ի-
րեն՝ յորմէհետէ երբ իր բանագորդի դիմակը
վար առած էի Հանրագիտակի մէջ: Զիս
տեսնելուն անմիջապէս մօտս կ'ուղղուի, եւ
կուգայ կը տեղաւորուի ճիշդ քովիկս, իր
Քրիզանդէմի յաւիտենական փնջիկը լամ-
փակին անցուցած: Այս պահուս այնպիսի
սուրսք մը չինած է, զոր ինչպէս սլիտի չի-
նէր՝ հաշիւ պահանջող պահանջատէր մը:

Պահ մը ակնարկ մը պտտցնելէ ետք
քովի նստողներու՝ ինծի կը դառնայ.

— Ծա՛, կ'ըսէ, իր դիւղիչ ածականովը,
— զոր սովոր է դործածել ամէնուն — ի՞նչ
գրեր ես ինծի համար . . .

— Ինչ գրեր եմ չեմ յիշեր ձեզի համար,
կ'ըսեմ անտարբեր եղանակաւ մը.

— Զե՛ս յիշեր մը ի՞նչ . . ., կը ձայնէ
փորփոքած. ծա անցած օր ի՞նչ ապուր կե-
րեր ես Հանրագիտակին մէջ:

— Հա՛ կ'ըսեմ, բանագողութիւնդ գրե-
լըս, չիտակը ըսէ աղուոր ապուր չէ՛ր, հէ՛...

— Էօյիշխոյ ֆօրին եր կը պօռայ ոտքի
կանգնելով, չէ՞ս վախնար (.) եկոր ատոր
խօսքը ընելու . . .

— Ինչո՞ւ վախնամ կամ քաշուիմ. կ'ու-
գէիր որ ձայն չի հանէի՞. ու ասդին կ'ըլ-
լեցնէի՞ր այդ աճաբարութիւնդ . . .

— Կ'ըլէ՛ք, կ'ըսէ, մինչեւ հիմայ ընտա՞ր
կ'ըլեցիք նէ, ու կը նստի կրկին իր տեղը,
իյնալու մօտ եղող ակնոցը շտկելով . . .

— Ալ տեղ չիմնաց կ'ըսեմ ականջն ի վար-
ժուելով նա սատեղնիս ելաւ . . .

— Պէ օղում կ'ըսէ, քիչ մը աւելի կա-
կուղցած, մնացիր ու մնացիր, դո՞ւն եղար
այս գործը մէջտեղ հանողը, ուրիշ մարդ
չիկա՞ր ալ քենէ զատ . . .

— Ատ ի՞նչ կարեւորութիւն ունի, կամ
ես գրեր եմ եւ կամ թէ ուրիշը, ամէնը մէկ
չէ՞:

— Չէ՛ եա, ես քսան տարի է որ այս զուարթ (?) ճիւղը կը մշակեմ, ինչ կերպով ալ ըլլայ, սակայն մինչեւ հիմայ մէկը չի համարձակեցաւ այդ բանը ընելու, ու կ'ուզէի որ մէկը ելնէր ու երեսիս տար ատ մէկ պզտիկ դերուքիւնս, զոր ամէն գրող ալ սնի ...

— Կեցիր կ'ըսեմ միտքս եկաւ ասկէ առաջ ալ կրկին այս դերուքեան մէջ բռնեցին քեզի, Մասիսի մէջ գրած «հինգ օր քարանդակ» յօդուածովդ, որու մէջ գրած մէկ ոտանաւորդ քաջի ֆուլի քօրեա էր օտար հեղինակի մը ոտանաւորին ...

— Հա՛ կ'ըսէ, ատեն մը ալ այդ մէկ պզտիկ դերուքիւնս երեսիս չամշցաւ զարնելու քու իշկիւզար վահան Փափազեանդ ... ու կ'աւելցնէ գլուխը երերցնելով, տի՛ կը տեսնես այդ խախտնա Պոլսեցի գրողները ...

— Իրաւունք ունիս, կ'ըսեմ խեղճ Ալփիար, այս որքան հակառակորդներ ունիս, չի քաշողներ ունիս եղեր, վազ անցիր ճանրմ գուն ալ այս ճիւղին պարտիզականութենէն ...

— Ինչո՞ւ ծա, վազ անցիր կ'ըսէ փորփոքելով, այսպիսի աղուոր գրականութենէ մը որ իմա . . . է եւ որու շնորհիւ այսքան գեղեցիկ անուն մը չինած եմ ինծի համար ...

— Ու ի մօտոյ ալ Պարոնեանի յաջորդ պիտի յորջորջուիս, կ'աւելցնեմ ծիծաղով մը ...

— Ծա՛ կ'ըսէ քիչ մը աւելի մօտենալով, մեր ըրածները բան մը չեն այն բանագողութիւններուն քով՝ որոնք կ'ընեն օտար գրագէտները, եւ ատոնց շնորհիւ ահագին համբաւներու տիրացած են ...

— Ըսել է կ'ըսեմ իր խոստովանութենէն գոհ, դուն ալ օտար գրողներու օրինակի՞ն կը հետեւիս կոր ...

— Հեղպիսսե կ'ըսէ պարծանքի շեշտով մը, կրնաք նէ դուք ալ փորձեցէք ու պոյներնիդ տեսնեմ, ես այսօր քանի քանի օտար գրուածքներ մարտեցուցած եմ իբրեւ իմա, ու օր մը օրանց՝ մէկը չեւաւ ըրածս երեսիս զարնելու, սակայն այս անգամ ինչ եւ է աճապարեցի, յանցանքը բովս է ...

— Ինծի նայէ կ'ըսէ ամէն գործի մէջ վարպետութիւն եւ արհեստ պէտք է:

— Բայց կ'ըսեմ այդ յատկութիւններդ չատերու չէ տրուած . . . այլ քեզի պէս աճապարներ արհեստ ըրած են իրենց:

— Հայտէ՛ հայտէ՛ կը ձայնէ, կեղեկաշիւի ատեն չէ, եկանք, ու շտկուելով ականջս ի վեր ծռելով կը մրմնջէ, — ըսածներս ուղիղ թէ չէ չըլլայ որ լսեմ, ետքը չեմ գիտեր հախեղ կուգամ, այս անգամ ի՞նչ եւ է ներեցի . . . :

Ու կը մեկնի բազմութեան հետ իր սըխալ նժարին վրայ ոստոստելով թէ արդարացումին ու խօսածներուն համար գոհ...:

ՍՏԵՓԱՆ ԵՐԿԱՆԵԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Դ

Գիշերուան վեհ խորհրդաւոր, անմեկին, Լուսինն մը սեւեակիս մէջն է պատեր, Մոմի մ'առկայծ պղպլումին սակ յոին՝ Կը ֆրֆրեմ անցեալ կեանքիս խօշ յուշեր:

Խոռով մ'անհունն սարսուռի պէս խօշական, Հոգիս մէջ կը կուտակուի մեղաւոր, Կը գալարուի՛մ, կը տեղոտի՛մ մոլորական, Ճնշումին սակ դառն վշտերուս ահաւոր:

Այլ կը տեսնե՛մ պատկերդ աղուր, ի՛նչ սիրուն, Պատին վրայ՝ որ վեստեմ ինձ նայի, Սեփիւթ՝ կարծես աշխարհիկ դառն իրերուն Հեզմոտ ժպիտ մը դեմքին վրայ կը փայլի:

Կը գրգռուի՛մ, կը մոլորեմ ի՛մ ես իսկոյն, Բա՛ն մը կ'զգամ ետքեանս մէջ ոգեւոր, Ու կը ջանամ քեզ փոխանակել իմ հոգեւոյն՝ Վրդովներ ու յոյզեր սիրալատ:

Բայց դուն անխօս՝ ինչպէս արձան մարմարեայ, Ինձ. կը նայիս, մի՛շտ կը նայիս անդադրում, Զգացումի նշոյլ մը իսկ ո՛հ, չկայ, Կարծես հեզեղ կ'ուզես իմին սերս անհուն:

ՀՐ. Յ. ՄՈՄՃԵԱՆ



ՊԶՏԻԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ

ԳՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Գրագէտ մը չըլլալը չ'արգիլէր զիս մըտքէս անցածը գրչէս ալ անցնելու, քանի որ Վաղինակ՝ գրագէտ մը չ'ըլլալով հանդերձ, այդ շապիկն ալ կռնակը անցուց 55էն վերջ:

Գրականութեան մէջ vouloir c'est pouvoir, այսինքն, մէկը երբ գրականութիւնը մշակելուզէ, հաւատացէք, կաղամբ մշակելէն աւելի թիւրին կըլլայ ան, երբ կամք ունենայ ան:

Արդ, ես որ թէ կամք ունիմ, եւ թէ կարողութիւն, ներեցէք որ մէկ երկու սիւնակի մէջ ձեզի բացատրեմ մեր օրուան պզտիկ գրագէտներու գրելու կերպը... եթէ նստած սենեկնուդ մթնոլորտը 18ը աստիճանը կ'անցնի:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

Կը ճանչնա՞ք զինքը... դէմքով, ամենափրասարսուռ բարեկամս Ե. Թօլայեանը, Միմոսին Օրագիրին հեղինակը, կուզէք իմանալ թէ այդ Միմոսի Օրագիրը ըսուած մնաստան ինչպէս կը խմբագրուի: Տասնոցը տուիք կարդացիք գրուածքը, հիմա ալ քանի որ քառասունոցը տուիք, անոր գրելակերպը պիտի հասկնաք: Յօդուած կայ որ 7¹/₂ սիւնակը ՏԱՍԸ ՓԱՐԱՅ կ'արժէ, յօդուած ալ կայ որ 3 սիւնակը քառասուն փառայ, չէք տեսներ Փանելաները, որոնք ապօքայով կը ծախուին, եւ կան ալ՝ որոնք վիթռիկներու մէջ, տեսնողին բերին ջուրը կը վազցնեն: Նմանութիւն չ'ըլլայ pardon! անցնինք:

Ե. Թօլայեան սիրասարսուռ բարեկամս, ընդհանրապէս երեքշարթի գիշերները կը մրտէ իր շարթուան յօդուածը, իր տունը, կազի լոյսով, եւ հակառակ սիկառ չի գործածելուն չրթունքին ծայրը փակած կըլլայ միշտ վաթսունոցը:

Բալթօն ուսերուն, գլուխը բաց եւ աչքերը սիկառի մութէն թաց, encore stephens կը գործածէ միշտ եւ գրած ժամանակ, այդ գրուածքէն առնելիք դրամին զետեղելիք ծակերը կը համրէ: Գրածը անգամ մ'ալ

չի կարդար, աչքը ձեռագիր թուղթերուն վերեւ դրուած թուանշաններուն կը տնկէ 18-19-20-21 եւ խելապտուկէն անցած էն գրամիտ (ներողութիւն, փացային մէջ (Ս) գիրը սպառած ըլլալուն պատճառաւ էր այս անտեղի (.) տառասխալը):

Յօդուածը չ'սկսած սուրճ մը կը խմէ, ինչպէս հաստ մ'ալ աւարտելէն վերջ:

Հա՛: Յօդուածը լմնցա՞ւ: Ալ Թօլայեան սիրասարսուռ բարեկամս կը փոխուի: Ան չէ:

Ե. Թօլայեան սիրասարսուռ բարեկամս համար կ'ըսեն թէ, գրած ժամանակ այնքան ակռաները կը սեղմէ որ կ'աւրուին, մէջէ մէջ կ'անցնին, եւ զանոնք շտկելու, սրելու համար է որ միշտ վահան Փափազ-եանին ետեւէն չի բաժնուիր:

Յօդուածը լրանալէն վերջ կը մնայ զայն թլաւե ընելու բազմակնճիւ գործը:

Շարաթաթիւրթի մը կ'երթայ, կը կարդայ:

— Մեր ուղղութեան չի համապատասխաներ, ներեցէք, ըսելով վեց գիրը կը դնեն:

Օրաթերթի մը կ'երթայ:

— Այդ ճիւղը չենք մշակեր կ'ըսեն:

Ուրիշ թերթի մը կը տանի:

— Ի՞նչ հիանալի՜... յօդուած... ո՛հ... միթէ կարելի է երեւակայել... ո՛հ... հրաշագործ յօդուած... կը տըպենք, կը տպենք...

— Աղեկ ամա՞... (սիրասարսուռ բարեկամս Ե. Թօլայեան, միմիգ ձեւերով երեսին կը նայի, ուսերը վեր տնկած... կարծես ըսել ուզէ « գրպանս ի՞նչ պիտի մտնայ »...):

— Հա՛ւ, լա՛ւ, գերահրա՛ջ յօդուած, կը տպենք, կը տպենք...:

Նոյն պահուն ականջէ ականջ բարտուք մը կ'սկսի, որուն հետեւանքը կ'ըլլայ հետեւեալ հարցումը:

— Ի՞նչ կ'ուզէք կոր այս յօդուածին փոխարէն...

— Կէս անգլիական կ'ըսէ բարեկամս, որ նոյն ատեն բթամատը ծիլէին թեւին անցուցած՝ je vendais au comptantի ձեւ մը առած է...:

— Օ՜... չատ է սիրելիս, առաջ 20 դրը կուտայինք, հիմա ի՞նչ եղաւ որ...:

— Եթէ չէ՞ք ուզեր, տուէ՞ք... Իմ քո-
վը՝ յօդուած չ'օթեկնար .° .° .° (չի պա-
յաթնարին պղծադարու հայերէնը)։

— Քսան եւ եօթը տանք ...

— 55 տուէք, հոգ չէ ...

— Քսան եւ ութը ...

— 54 ...

— 29 ...

— 53 ...

— 30 ...

— 52 ...

— 31 ...

— 51 ...

— 32 ...

— 50 ...

— 33 ...

— 49 ...

— 34 ...

— 48 ...

— 35 ...

— 47 ...

— 36 ...

— 46 ...

— 37 ...

— 45 ...

— 38 ...

— 44 ...

— 39 ...

— 43 ...

— 40 ...

Ուսմ ֆաթէֆա ... Թոֆա ...

Եւ ահա աճուրդը կանգ կ'առնէ հոգ,
եւ վայրկենաբար երկու մէծիաները սիրա-
սարուռ բարեկամիս գրպանը կը խորասուղ-
ուին, եւ յօդուածը կը շարունակ տասնական
փարայի կարգացումը համար։

Ահա մեր գրական հրապարակին էն մօն-
սէն յօդուածագիրը, իր բուն իսկութեան
մէջ, Յաջորդ շարթու կը խօստանամ ուրիշ
պզտիկ գրագէտներու վրայօք անդեկու-
թիւններ տալ ձեզ եթէ ... չը ձիւնէ։

Պզտիկ նամակ մը պզտիկ գրագէտին։

Սիրասարսուռ բարեկամս,


Գիտեմ թէ այս տողերը կարդալէ վերջ,
զիս ուրիշ մը կարծելով անոր վրայ պիտի
հարձակիս Միւնուի Օրագիրիդ մէջ, եւ եր-
բէք չ'պիտի հաւատաս թէ՛ ես եմ գրողը,
քանի որ բարեկամ ճանչցած ես զիս, բայց
գիտցիր որ գրչի աղբաթիկներու միջեւ եղած
կատակները սիւմբիսիէկի խածուկներու պէս
կըլլան ... քիչ մը թուքով կանցնին, կը
մոռցուին բան մը որ փորձեցի այս անգամ...
Քոյդ
ձեր վրայ։

ՍԵՂՐԱԿ ՄԱԽԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՆ

ԵՒ

ԻՒՐ ԵՐԳ



Առ մեկհատիկն Անոյշ

Աղուորն է կուգայ նազերով հազար,
Վա՛ր առե՛ք աչքեր, չ'առնե՛ք չարնազար,
Մանճրուֆայր ֆաշե՛ սասրակի նման,
Մեկուսի, շուքե՛ր. ազատ քոյ գայ ման։

Աչկունքն եմ վառեմ երկինքին քոցեր,
Աստուծո՛ւն ի զաւ սիրտն ինձ լոկ քացեր,
Միսֆա՛ իր հեշտ գաւառ, սեւա՛ իր հորիզոն.
Հոն հոգեակն յառի, քառի ամազոն։

Մեք ամեն ունեաց՝ նազի՛ դիցունքին,
Չե՛ք տեսնեմ նման աշխարհի՛ նոր քե հին,
Լեզուք բոլորին՝ սին խօսքի նաժիշտ,
Քերթողին. ֆաւր՝ լոկ իր երաժիշտ։

Գեղուղիչն հասակ ծաղիկի՛ նշենի,
Զիւներուն մեջէն շրթաւք անունի,
Մեխակն ու շուշան այսերն եմ քուսեր,
Հաւքոյրի մեղու քառի հոն իմ սեր։

Աղուորն է կուգայ. հա՛րսն իմ անուշոտ,
Կորի՛ք, շամիրա՛մք. վարա՛րք վալաշոտ,
Գայ սանեղ փեսան իր սուրբ առաքաւտ,
Հո դմ, հոսե՛ք փոշի պիղծերն անզգաւտ։

Աղուորն է կուգայ, գանգուրֆ՝ զարդ գլխուն,
Զֆնաղ ձիւքերով գեղունեաց դշխուն,
Աշխարհի պատկառանք շուք շուրջ տարածուի,
Երգով քերթողին քոչի նե արծուի։

Քղանցն ամպն ի վեր վարսաւ ծածանի,
Գեղոյն իւր պատշէկ սե՛ր ծիածանի.
Ծով ծով աչքերէն ծիծաղին ծաղկունք,
Հոսին վիհն հոգւոյս խանդի կայծակունք։

Սիրեմ ես աղուորն, աղուորն անարատ,
Ոյր սերն արփոյն պես անշեղն է հրատ.
Աղուորն հաւքուրով չե՛ որ կը սիրուի,
Այլ հոգւովն աղուոր ու աղուոր աշուի։

Ահա՛ իմ աղուոր գեղով խառնոսիկ,
Հոգին դեմք հազեր, հոգի՛ն խորոսիկ,
Զիւքերն իր աղուոր օժիսս է, քսեր,
Քան զարդ, գանձ ամեն՝ հարուստ՝ եւ իր սեր։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

“Ս Կ Ա Մ Պ Ի Լ ,”

Հիմա որ գիշերները քնչիլ մախառայէն Միմոսի եւ կամ Նիկեիս Օրագիրէն ալ երկար ու ձանձրանալի են իրենց միապաղաղ ու պաղ ժամերով, ընտանեկան շրջանակներումէջ ժամանցը զգալի դարձած է ալ:

Ժամը երկուքին կերակուր, ՁԿ՝ին սուրճ, երեքէն չորս մսակերութիւն (որ թարգմանի բամբասանք), իսկ չորսէն անդի՞ն ... մինչեւ որ արտեւանունքներ, ծանր կափարիչներու պէս գոցեն աչքերը, ահա ինչ որ մը տածել կ'ուտայ ամէն անոնք՝ որոնք կանուխ վերմակին տակ մտնելը չեն սիրեր:

Հայ-լայֆ դասակարգը՝ իր տաք սալօնին հետ քօֆիշը ունի, որուն շուրջ կը բոլորուին ոսկին հինգնոցի տեղ վատնող հարուստները: Հապա, միջակորեա՛ր դասակարգը, ինչո՞ւ անոնք ալ չունենան իրենց գիշերային ժամանցը, անոնք ալ սկսանք իրեն, Նոյ նահապետի միակ զբօսանքը, որ մինչեւ մեր օրերը կը խաղացուի, խաղ մը որ իր իշխաններուն շնորհիւ ծերունիներէն աւելի՝ քենսնէն քիթը, պիղ պըյըխ միսիւններն ու մազերնին փօփօ շտկող ուհիները աւելի կը սիրեն:

Կը վստահացնեմ զՁեզ, եթէ օր մը սկսանք պիղ ըսուած խաղին իշխանները վերնան ու պոխիլ պէս լուռ մունջ խաղալը որոշուի, հաւատացէ՛ք, Թուրքիանտա տուտուններէն եւ Թորոս աղաներէն վատ, ոչ ոք սեղանին գլուխը կ'անցնի, բան մը որ ուզած բանս է, ինչպէս ամէն անոնց՝ որոնք ամէն բանի մէջ պատշաճութիւնը եւ բարոյականը կը փնտռեն:

Քիչ մը վարը պիտի տեսնաք թէ՛ անմեղ սկսանք, ինչ տեսակ անվայել արարքներու եւ ընտանեկան բանավէճերու առիթ կուտայ:

X

— Երկու աչկդ քշօնայ քի խապառմիչ չես ըլլար կոր, կ'ըսէ Տիկին Տիւրիւկ, էք-մէք խաթայիֆին երերցնելով կրակին վրայ,

հէմ իրար անցան խաղացին հէմ ալ վրայ տուողը Տիւրիւկը եղաւ ...

— Կընիկ ... ի՞նչ կատուի պէս կը մըռմըռաս կոր, չեղա՞ւ տահա ... կ'ըսէ Մարտիկ աղա խոհանոցին դրան առջեւ կեցած:

— Հայտէ պանը՛դ կնայ, ինծի հաւատ կէ օրէնքէ մի հանէ՛ք կէնէ, լախըռտը չիյտէք նէ տրպատունին գիրքը պսնայիք կարդայիք տէ ատ նալլէթ սկամալիլ խառնախսին օթթան չի դնէիք ...

— Սանքի ես բէ՛ք կ'ուզեմ կոր քի խաղանք տէյի, աղջիկներուդ ըսէ, Փընտրիս խուռտիի պէս խըվըմ խըվըմ կուգան կոր քի խաղան տէյի ...

— Քա մարիկ խելքիս պանը չէ ... մեր վախիթը մազը կուզը ճերմկածները կը խաղային, հիմա՞ ... գիտես քի հոգի կուտան կոր բիճերը ...

— Հայտէ չարուխ ըրէ տէ լմննայ, հիմա ուր է նէ կուգան, ամա նայէ քի խայմախը օգտեցունես, վէրէ քսանի առինք գիտե՞ս եա ...

— Զիտեմ արթըխ, պաճախներովս պուզ կը կտրիմ կոր, Ֆանէլա տակնոց մը չի կրցի առնելու, Փարազա աս մարսուֆովը վուճուտ կը վաստըկէի ...

— Ի՞նչ Ֆայտա կընիկ, ճահիլ խըսմիին ուշմիչ պիտի ըլլաս, անանկ Պէյօղուցիի պէս թէատոօ պալօ չունի՞ն եա, իշտէ սկամալիլ մը, ատ ալ Փէրահաթ ընե՞նքնէ խուռտանմիչ կ'ըլլան ...

— Իշտէ եղաւ ամա, ես ալ հետը եղայ, ըսելով գործը կ'աւարտէ ու պնակը քաշելով վեր կ'ելլայ:

X

Ժամը երկուքը քիչ մը անցած դուռը կը զարնուի, եւ հինգ վայրկեանի մէջ, Մարտիկ աղայի բակը լաստիկճիի կրպակ կը դառնայ:

Երեք տունուոր, կին, աղջիկ, ծեր, տառեց, երիտասարդ, բոլորը մէկ կը լեցուին,

մինչ ուրիշ մէկը ահագին ծրար մը ներս կը խոթէ հեւալով:

— Բարի իրիկուն ձեզ ...

— Ու այս սովորական բանաձեւը քսան անգամէ աւելի կը կրկնուի:

— Նա՛ Կիրակոս աղա, պէշիկը սանկ վեր բեր տէ օտային քէօշէն դիր:

Մարտիկ աղա որ նոյն պահուն ապուշ կրթած սենեկին մէկ անկիւնէն մսավաճառի պէս ներս մտնողները կը համրեր, կնոջը մօտենալով,

— Տիրիւկ ... եկողներուն նիւմէօսն չաշքրմըլ ըրի. ան չպիտի ըսեմ, սա պէշիկ է ի՞նչ է ... ա՛տ ինչու բերեր են ...

— Սուս ճանճմ խելքիս պիտի գայ, կեցիր նայինք, աս իրիկուն ալ խուռտախ մը բերին տնկեցին ...

— Ասոնց մէջը չի ճանչցած տէլիխանը ներս կայ, կէօզլիւկին կայ, պըլըխըն կայ, պըլըխըն կայ ... չըմէնտըֆէռի ստասիօնը կը կիտնամ կոր ինքզինքս ...

— Բաթլամիշ ըլլան, իրենք եկեր եկեր, դուռ դրացին ալ առջինին ձգեր առեր պերեր են, նայէ տահա կըսէիր կոր քի չիֆթ մը հացը կօգտէ տէյի ... լըզուտի՞ն պիտի ...

— Ես խաթայիֆէն վազ անցայ, թապախներն ալ վրայ չերթայ տէ մահալլէպիճիին ճէզա չիտանք ...

— Էյ հրամանեցէք նայինք, բարի եկաք, կ'ըսէ տիկին Տիրիւկ խօսք առնելով:

— Բարին վրադ դրացին, եկանք քի հախ ըրած խաթայիֆիս ուտենք տէյի, նայիմ սախըզներու պէս ըրե՞ր ես ...

— Ծուռքէս եկածը կրակին երիածը, եփեցի՞ ամա չիյտեմ քի աղե՞կ է մի գէշ է ... ուտե՞ք նէ կը հասկընաք ...

— Էյ հայտէ նայինք Ուսկուհի, չօճօխիս մէմէ մը տուր պէշիկը գիր տէ մասան խուռմիշ ընենք, աս իրիկուն ինչի պիտի խազանք ...

— Ալոն ալոն քօմանսօն, կը ձայնէ անդիէն չիք միւսիւ մը, ոտքին մատներուն վրայ դառնալով ...

— Քա աֆ կընէք ամա, սա միւսին չեմ ճանչնար կոր ...

— Տալըչս ախպարն է, Օգսէնիկը ...

— Էյ անոր քովի տէլիխանը՞ն ...

— Ան ալ իրենց մաղազային մէջի եաղըճին է, սկամպիլի մէռաք ունի եղե՞ր տէ աս իրիկուն հետ է եկեր ...

— Էյ ան պուճախի տղա՞ն ...

— Գէորդին է, ներոյս աղպարը ...

— Անոր քովը ոտքի վրայ կայնողը՞ ...

— Լեւոնիկը, դրացիներնուս տղան, աս տարի տիպլօման առաւ ...

— Ան միւսին ո՞վ է, կռնակը պատին տուեր է նէ, աթուռ ալ չիգայ քի նստի ...

— Հա՛ ... Յարեթի՛կը, սեպէլիք պանչէ, մահալլէի չօճուխ ... տահա Գարեգինն ալ պիտի գար ամա՛, խալապալըխ կըլլանք տէյի սայղը ըրինք տէ անուշ տեղը կապեցինք ...

— Ֆարաշս պէրէյիք նէ ալ կ'ըլլար, սըտեղը քանի՞ հոգի ենք քի ... ըսելով կը մեկնի մօտէն, ու սենեկին մէջ ահագին պուռհահա մը կսկսի, մինչ Մարտիկ աղա անկիւնը քաշուած կը դիտէ ամբողջութիւնը:

×

— Հայտեցէք նայինք, սա ըսկամպիլին մասան խուռմիշ ըրէք, վարպետը ո՞վ է նէ թող թեւաւորուի, չիֆթ տասնըմէկ, թաւուխ կէօքսիւի պիտի ըլլայ աս գիշեր ... կ'ըսէ Սեդրոս աղա, որ սկամպիլի վարպետ անունը կը կրեր իր չըջանակին մէջ:

— Կեցիր նայինք, առաջ միսաֆիրնէրուն նստելու տեղ մը ցուցնենք տէ ետքէն խօլայ է, շատը ոտքի վրայ մնացին, կ'ըսէ տիկին Տիրիւկ, հոս հոն երերտկալով ի խնդիր աթուռի:

Քիչ մը վերջ աւանդական սեղանը մէջ տեղ կը բերուի ու բոլորը մէկ շուրջը կը շարուին:

— Եթէ ներելի ըլլայ, պիտի առաջարկեմ որ օրիորդները ես ընկեր առնեմ, կը ձայնէ ակնոցաւոր միւսիւ մը, ձեռքերը բանթալօնին գրպանը դրած:

— Սիրտդ կառնէ օղլում, դուն կեցիր նայինք հէլէ, մենծերը նստին տէ նայինք ո՞վ որի պիտի խնայ ...

— Ալ աւելի աղեկ մեզ համար, մենք ալ ասդին ուրիշ խաղ մը կը հնարենք ...

— Համմէ՞ ... կը ձայնէ Մարտիկ աղա նստած տեղէն թիզ մը վեր ցատկելով ...

— Ըսել կ'ուզեմ թէ՞, մենք ալ օրիորդներուն հետ անջատ խաղ մը կրնանք հնարել իբր ժամանց ...

Մարտիկ աղա տեսնելով որ զանոնք առանձին ձգելը գործին չպիտի գայ,

— Ձէ օղլում չէ՞, դուք խաղացէ՛ք տէ մենք սէյրիճի կըլլանք աս գիշեր ալ, ասանկ թող ըլլայ ...

— Քա մեղայ, մենք ինչու չի խաղայինք սանքի, կը ձայնէ տիկին մը, որուն աչքը դռանն էր, խաբայիճին սպասելով:

Ու հիմա բոլորն ալ սեղանին շուրջն են, չորս երիտասարդ եւ չորս հատ ալ օրիորդ:

— Ա՛խ ... կ'ըսէ տարեց դրացի մը, պէտքը չէ՞ քի ասոնք իրար առնեն, սա նայէ ֆիտանի պէս, ազդիկները ըսես նէ պըլըս պըլըս ...

— Սուս եղիր քուրուկ սուս, թըրախուման տեսա՞ր մի ... քէօռնայ աչուընին, խամպուռ ըլլայ, թօփալ ըլլայ ավուճը տուռ ըլլայ կ'ըսեն կոր ...

Մինչ այս մինչ այն, խաղը կ'ըսկսի ու իշմարները ծիծաղները, աչք իքվինները բուր գիրար կը կտրեն:

Մարտիկ աղա որ բազմոցին անկիւնէն իր աղջիկներուն մէջ տեղը նստած էր, ուրիշ բան չեր ընէր, բայց եթէ դիտել իր նազէնիմներու իշմարները, անոնցմէ բան մը հասկնալու, եւ որ աւելին էր, կասկածները կամ փարատելու եւ կամ հաստատելու համար:

Նուարդ անընդհատ մէկ աչքը կը գոցեր, մինչ ձեռքը երեք հատ իննոց կը գտնուէր:

— Ինծի նայէ Նուարդա, ի՞նչ իշմար է աս քաշածը ...

— Հիչ հայրիկ, իշմար չի քաշեցի ...

— Նասըլ հիչ, պիր տիւզիւէ ասօ իշմար կուտաս կոր ...

— Միւսիւ Երուանդը մէկ աչկը գոցեց նէ ես ալ թըպիւքըն ըրի ...

— Քա աղջիկ, մէկ աչկդ գոցե՞ս նէ, ասօ իշմար ըսել է, դուն խէ երեք հատ սօլը պոներ կեցեր ես ...

— Քա ճանը՞մ Մարտիկ աղա, թող տուր քի խաղան ճահիլները, հիչ իշմարսը սկամպիլ կը խաղացուի՞ ... չօգ չէ՛յ ...

— Քա կընիկ, պօլը իշմար ունի՞ ...

ինչ տեղը կայ քի թէք կէօզ իշմարներ ընեն ...

— Էյ ա՛ման չիյտեմ ալթըլս պան մընես եղեր ...

— Ես չէի ըսողը, ուզածնուն պէս թող խաղան ըսելով ոտքերը վար կը կախէ ու կսկսի լուռ մունջ դիտել խաղը, մինչ աչքերը եւ իշմարները իրենց ծայր աստիճանին կը հասնին:

Քիչ մը վերջ Մարտիկ աղայի ոտքին պզտիկ մը կը դպին, վրան կը կոխեն, չի խօսիր, ստքը քիչ մը անդին կը քաշեն, ձայն չի տար եւ ի վերջնոյ ոտքը կ'առնեն անդին կը տանին ու կ'սկսին սեղմել:

— Ինծի նայեցէ՛ք, կ'ըսէ Մարտիկ աղա բարկութենէն խնդարով աս ճահիլները նոր մօտայ կը խաղան կոր սկամպիլը, իշմարը հէմ վերէն կուտան կոր հէմ վարէն: Ոտքին վրայ կոխելը ասօ է եղեր, երկու ոտքին առան առնելը իքիլի, բիւթիւն բիւթիւն վեր առնելը չըթըռ ...

— Տէր ողորմեայ կ'ըսեն բոլորն ալ հիչ ատանկ բան կ'ըլլայ, տահա նէլէր ...

— Հայտէցէ՛ք սա օյինն ալ լմընցուցէ՛ք տէ վերցունենք զէրէ մասան պոնելուս պէս բէնճիրէէն վար պիտի նետեմ զաթը արունըս անտար խայնամիշ կըլլայ կոր քի քառասուն սիւլիւկ փակցունէ՞ք նէ ֆայտա չի պիտի ընէ ...

— Ներեցէ՛ք Տեսար Մարտիրոս, խօսք կ'առնէ միւսիւներէն մին, ժէթթերով խաղը այսպէս կ'ըլլայ ...

— Եսթերը, Նաթիկը չիյտեմ, հրամանքդ կուզե՞ս նէ ծանրդ կտրէ, քիչ մը տահա չի խօսէի նէ իս մասային տակը պիտի քաշէիք ...

— Բայց գիտնալու էք որ բոլորովին ներհակ գաղափարներու ծառայել կուզէք ձերայդ անպատշաճ ենդադրութիւններով ...

— Ինծի նայէ միւսիւ խաթայիճի՛ բայդ տուն խրկէի տէ աս իրիկուան աչկիս դէմը աս ընէգիլութիւնը չի հանէիք ...

— Էյ տահա՞ ... չօգ չէ՛յ ... մեղայ տղաս սխտորկուչը դրեր կը ծեծէք կոր ... Փարազըմ իշմար տալով աղջիկը խօթուլը չի զարկաւ տէ դուրս հաներէ՞ր ես՝ ... կ'ըսէ միւսիւին մայրը փրփրելով ...

— Էյ հայտնեցէ նայինք էյլէնճէնիս հա-
ռամ չըլլայ, Մարտիկ աղա դուն ալ բէք
թօհաֆ ես, հիմա ծառքը ասօ ունի նէ ին-
տոր հասկցունէ պիտի աղջիկը . . . :

— Քա նասը՛լ ասօ, ծառքը տօգուզու
կայ, հապըռէ թապէ ըխտէնեայի պէս աչքը
կը գոցէ կը պանայ կոր, էյ քովը նստեր
եմ կը տեսնեմ կոր տէ նասը՛լ ծան չի հա-
նեմ . . . :

— Ան քուկին աչքիդ է երեւցեր, պէլքի
լամպային լուսէն աղջիկանը աչքը խամաշ-
միշ եղա՞ւ . . . :

— Էյ մասային տակէն օտկս տէտիրիկին
ընենի՞ն . . . ատոր ի՞նչ պիտի ըսէք . . . :

— Ամա հայրիկ, շատ կ'ըլլաս կոր . . .
տահա պան կա նէ իֆտորա ըրէ . . . խօսք
կ'առնէ օրիորդը քարիտէսի պէս կասկարմիր
կտրած :

— Սո՛ւս . . . սըյրըխ սիմարա, Մար-
տիկը գիտցած հարերնիդ չէ, չեմ քնանար
քա չեմ քնանար մեռաք մընէք, աչկ պանալ
տուռդ սոյլն չեմ . . . :

Նոյն ատեն պէշիկին մէջի պզտիկը վանկ
վանկ կը պօռայ :

— Քա կեցէք նայինք չօճուխը ճաթիկ
ճաթիկ կ'ուգայ կոր . . . :

— Էյ թօհաֆ ես եղեր մէմէ մը տուր
տէ ալընտըրմիշ ըրէ :

— Քա՛ տըռիկ կայ քի, քիմ պիլիբ, ե-
րեսին սիկառայի մոխիր ձգեցին ի՞նչ ըրին,
հիշ ասանկ ըրած չունէր . . . :

— Քա տա դուռը բաց ձգեցէք հիմա կը
մարիմ հա՛ւ . . . սագտէլայի ֆըչի տառցաւ
օտան . . . :

— Չի հասնէինք տա խաթայիֆը ճըռթ-
կելու, երկու չէնեէ պիտի նետեմ տէյի
հէմ ըռես եղայ հէմ տըռիկէս . . . :

— Կեցէք ճանըմ ինչէնէ պերեմ տէ օռ-
թայէն վերնայ ըսելով Տիկին Տիւրիւկ դուռս
կելայ, եւ կ'սկսի սերին կտորները կրկին
կիսել որպէսզի օգտեցնէ :

Քիչ մը վերջը գոյգ մը պնակները ի հան-
դէս կուգան ու բոլոր նստողները կսկսին
խօսակցութիւնը փոխել, բարկութիւնը
շողորձորդ գնահատումի կը փոխուի ու նա-
խորդ բանալէճը վերջ կը գտնայ :

— Էյ իշտէ աս էպէլ էվէլք պան էք ը-
րեր քուրուկ մենք շախա ըրինք . . . :

— Էյ ծառքդ դալար վրայէն կերեւայ
քի պերնի լայըխ պան է եղեր տէյի, զաթը
Մարտիկ աղան մեռաքը է, սաղլամ էյիպէն
է առեր խայմախը . . . :

Եւ որովհետեւ բազմութիւնը շատ էր ու
պնակները չպիտի օգտէր ուստի նախ մե-
ծերուն հրցուեցաւ եւ միւսները սպասեցին
իրենց կարգին :

— Էյ իշտէ սկամպիլին պէրէքէթը ա-
սանկ անուշ անուշ կուտուի Մարտիկ աղա,
ի՞նչ ըրաւ նէ ան սօնի խաբութը ըրաւ . . .

— Աս իրիկուն ալ կ'ըլլար կոր ամա,
պէրէքէթ վէրսին ույանըխ բըրթայ . . .
կ'ըսէ Մարտիկ աղա քիթին տակէն խնդա-
լով . . . մինչ անդին Ժիրուկ նինէն կըսկսի
բաներ մը ըլլալ :

— Ի՞նչ կայ տուտու, ի՞նչ եղար, կը
հարցնեն ներկայները :

— Սո՛ւս աղջիկ, էրեէթի առըններուս
թախըմը չաթ ըրաւ . . . :

— Էյ քա՛, զահէր քէնարի խըվամը
թառաֆը քեզի էր ինկե՞ր տէ ան է . . .
վախ վախ վախ ինտոր ալ տիխաթ չըրինք . . . :

— Էյ չօգ չէյ . . . պարէ օխտը օսկի
թամամ բարա՞յ ալ չի տայինք նէ . . .

— Էյ հիմա ի՞նչ պիտի ընենք քի . . .
թուշա քիթիս կը դպչի կոր . . .

— Քա՛ . . . ետեայիս սուռաթը մուշ-
մուշա տառցաւ . . . կ'ըսեն պզտիկները ու
գահ գահ մընէ կսկսի սենեկին մէջ :

Այս պահուն օրօրօցին մօտ կաթ տուռդ
տիկինը չի կրնալով լուեցնել տղան, անանկ
մը կը նետէ որ պզտիկը ալ աւելի կսկսի
վանկ վանկ պոռչտալ . . .

— Էյ հիմա խեքիս կուգայ, էօ՛ֆ . . .
քա մարիկ նալէթ ըլլայ քէչկէմ չէյինք ե-
կեր կ'ըսէ տիկին մը . . .

— Քա ֆարազա մատ մը խայմախը
մենք ալ կըռնայինք առնէր տէ ուտեր, աս
ի՞նչ տէրտի հանդիպեցանք կ'ըսէ ուրիշ մը . . .

— Էյ հապա ետեայիս տուր ախաանե-
րուն կոտրիլը . . .

— Մարտիկ աղային ըրածն ալ կը վայ-
լե՞ր սանքի, կէօյամ քի տղաս աղջկանը իշ-
մար է ըրեր, տոտոխը խառնըշտըկեր է . . .
պերանս պիտի պանայի՞ ամա՛ . . . նէ իսէ . . .

Խաթայիֆը ուտուելէ վերջ իբր մարսո-

ղական եղած բամբասանքէն վերջ երբ հիւրերը կը պատրաստուէին մեկնել, Մարտիկ աղա խօսք առնելով:

— Կէնէ հրամանեցէք պիտի ըսե՞մ ամա, գիտե՞մ քի պէօհիւզիւր եղաք տէ անոր համար ճէտարէթ չե՞մ ըներ կոր . . .

— Էյ քեզի պան մը ըսե՞մ Մարտիրոս աղա . . . չըմայլում պաներ եղաւ աս գիշեր, հէ՛մ ալ սէրը սէպէպը դուն ես . . .

— Մեռնիմ տէ մէյմնալ կամ նէ ալաֆրոռանկայ կուգամ քի, ձեր միւսիւները ըռահաթ զէվքերնին ընեն, անանկ իննոց պօշին աչի իքվի ընել չե՞մ ի տար պապամ. . . իշտէ պու:

— Քա ճանըմ սուս Մարտիկ աղա, ամօթ է կ'ըսէ տիկին Տիւրիւկ, խնդիրը մարելու համար:

— Տուն սա պէշիկը չալիէ, ես ալ չօծոխը փաթթեմ կ'ըսէ հիւրերէն մին, սիւլիւկի պօյ խաթայիֆ ուտեմ տէյի ձմեռ գիշերով չօծօխս դուրս ձգեցի . . .

— Քա լաստիկիս թէքը . . .

— Քարիօնըս . . .

— Քա միւսիւին թապաքէռան . . .

— Քա ճանըմ կեցէք չօծօխիս շորերը . . .

Ու այս խառնիճաղանձ վիճակը գրեթէ քառորդ ժամ մը կը տեւէ ու բոլորը մէկ դուրս կ'իյնան:

Փողոցին մէջ:

— Քա վայ մեղքիս, ան ի՞նչ լպուտուկ խաթայիֆ էր . . .

— Քա կիւզէիմ սուտտանէ չէնեէն օւթայէն երկուք եղաւ . . .

— Հապա Մառտիկին խըռը . . . ըռարութալը թուշերնուս տուաւ . . .

— Քա չօծօխի՞ն պէօհիւզիւրութիւնը . . .

— Լաստիկներս ալ փոխուեր են . . .

— Որչափ տմարդի ընտանիք . . . ո՛հ . . . զգուա՛նք . . .

— Մենձ աղջիկն ալ ըռարութալը քըսուեր էր . . .

— Չաթաշներն ալ ձէնձ կը հոտէին կոր . . .

— Տիւրիւկին ալ ռաստըխն էր պակաս . . .

Ու այսպէս նմանօրինակ բամբասանքներով բոլորն ալ իրենց տունները կը հասնին, ակամպիւին իրաւունքը եղող խաթայիֆը ուտելէ վերջ: Մինչ ասդին Մարտիկ աղա մո-

մը ձեռքը կոկսի տանը մէջ վեր վար պըտըտկիլ:

— Քա ճանըմ ի՞նչ կայ քի մոմը առէր կը պտըտկիս կոր . . . չօգ չէյ . . . կ'ըսէ տիկին Տիւրիւկ:

— Պուն չիյտես կնիկ . . . աս եկող միւսիւները բէք ալաֆրոռանկայ ըլլալուն կը վախնամ կոր քի պէլքի ալաֆրոռանկային սօն բէրտէն խաղան տէյի մէկերնուն մէկը հոս մնայ տէյի . . . վէրէ ան կ'զլիւկիւին աչկին բէք չի հաւնեցայ . . .

— Ը՛հ . . . ուր է, քէշկէ առնէր . . . ամա չեն առնէր եօղայ:

— Կ'առնեն կնիկ կ'առնեն ամա գիշեր մը մինակ . . . խաթայիֆը կուտան, աղջիկըդ դէմը կ'առնեն իշմարները կուտան, էյլէնմիշ կըլլան անկէ ետքը տրպերնին կը դառցունեն կերթան . . . Ես էն հին օրէնք սկամպիլը օւթան հանեցի քովերնին նստեցայ, ալ բան չի գտան նէ մահալլէպիւ պէս գործը խաղանտիպի տառցուցին, տակէն ալ ֆլէթմիշ ըրին գործը . . . աս ալ գործիս չեկաւ . . .

— Էյ թօհաֆ ես ասոր չարէ՞ն . . .

— Հա՛ . . . ասոր չարէն մէկ եօլմը կայ, աղջիկ զաւակները, տարիքնին ինչտար ալ մեծնայ նէ գիշերօթիկ դպրոց մը դնելու է, միւշթէրի էլլայ նէ տէրօի պէս տանելու ցուցնելու, նշանելու պսակը հոն ընելու, կուլիս տէֆ ընելու է, չէնէ ասանկ էքմէք խաթայիֆիով աղջիկ կարգեմ ըսես նէ, աղջիկէդ առաջ, պախալը իլէն խայմախճին կը կարգուին, դուն ալ պուլաշըխները ըլլալու կնքահարութիւնը կ'ընես . . . կազը բուֆ ըրէ տէ պսակինք պէքճին կէօ գիշեր կը զարնէ կոր արթըր . . .

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Բ. ԻԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԻ ԻԱՍՏԱՌԻ

Ներկայ ձմեռնամուտի առթիւ ընտանեկան երեկոյթներու անհրաժեշտ պարը քիչ ժամանակուան մէջ ուսանելու փափաքողը կրնան դիմել իրեն Բերա, ԿալաթաՍէրայի դէմ Սիթէ տը Բերայի մէջ թիւ 11. Պոլսոյ կողմ Մեծ Ծուկայ, Գալաքճիլարի դուռը, Փէսճի Սեպուհ աղայի խանութը:



ԱՌՏՆԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Թիբեդի կամ պղինձե ամանները մաքրել

Մաղուած մսիւրի մէջ ձկն ղնելով պէտք է թանձրացնել, սեւցած ու աղտոտ ամանին ամէն կողմը քսելով ասուփի կտորով մը պէտք է լու մը չփել, մինչեւ որ ամանը իր առջի փայլուն գոյնը առնէ:

Մագի խոզանակները մաքրել

Աղտոտած խոզանակին մագերը հաւկիթի դեղնոցի մէջ աղէկ մը թաթխելէ վերջ, պէտք է թողուլ որ չորնայ, ետքը չփելով վրայէն հանելու է, եւ յետոյ տաք ջուրով լուարու է, ասով աղտը բոլորովին կեւայ, եւ նորի պէս կըլլայ:

Դեղնած գերմակեղեկները նորէն գերմակեղ

Երկար ատեն մնալէն, կամ ծուխով եւ կամ ուրիշ պատճառաւ դեղնած գերմակեղէնները նորէն գերմակեղեղու էն նոր եւ դիւրին կերպը: Կարագը հանուած եւ կամ օր մը հանդարտ ձգելով վրայէն սերը (խայմախ) առնուած կաթը, պէտք է մէկ քանի օր թողուլ որ կատարելապէս թթուի: Դեղնած գերմակեղէնները անոր մէջ պէտք է թրջել եւ քիչ մը ժամանակ այնպէս թողուլ: Բարակ կտաւները քիչ, իսկ հասաւորը աւելի շատ ժամանակ այդ կաթին մէջ ձգելու է, վերջը ձեռքով լու մը չփելու է, յետոյ քաղջ ջրով եւ ածառով նորէն լուարու է, վերջէն պաղ ջուրէ անցնելու է, ջուրը քամելու չորցնելու է: Եթէ մէկ անգամով դեղնութիւնը չանցնի, գործողութիւնը կրնաք կըրկնել երկրորդ անգամ: Շատ բարակ գերմակեղեկներու համար կաթը շատ օր ձգելու է որ չափազանց թթուի:

Սենեկի մը ծուխը մաքրել

Եթէ սենեկի մը ծխախոտի մուխը եւ կամ իայտի ծուխը մաքրուիլ ուզուի, պէտք է մեծկակ սպունգ մը ջրի մէջ թաթխել, եւ այնքան սեղմել որ ջուր չի կաթի, յետոյ զայն սենեկին մէկ կողմը կախել եւ

կամ, եթէ սենեկին ծուխը սաստիկ շատ է, պէտք է փայտէ ամանի մը մէջ պաղ ջուր դնել եւ սենեկին մէկ անկիւնը դետեղել, ջուրը սենեկին բոլոր ծուխը իրեն կը քաշէ, եւ այսպէսով սենեկին օդը կը մաքրուի:

Հաւերուն շաւ հաւկիթ ամէն շաւ

Առատ ուտելիք ունեցող հաւերը շատ հաւկիթ կ'ածեն, միայն թէ հաւկիթին կեղեւը կազմելու բաւական նիւթ չի կրնալով գտնել շուտ չեն կրնար ածել: Այս մասին պէտք է հաւերու տրուած կերին հետ խառնել հաւկիթի կտորած կեղեւները, եւ կամ պէտք է քիչ մը կիրով խառնել կերը, հաւերը այս խառնուածքը սիրով կուտեն եւ ածան կ'ըլլան:

Բռնկած ծխանակները (օճախ) մաքրել


Երբ տուններու ծխանը (օճախ) բռնկի, պէտք է անմիջապէս՝ առանց շուարելու մաս մը ծծումբ նետել բոցերուն մէջ, ծծումբի ծուխը անմիջապէս կը մարէ բոցը, եւ այս կերպով տունը կ'ազատի ահագին հրդեհէ մը: Տանը մէջ բերանը գոց չիշով մաս մը ծծումբ (քիւքիւրտ) պահելու լաւ է:

Լուերը ջնջելու միջոցը

Երբիցուկ եւ կամ եզան աչքը ըստած ծաղիկը (բարաթեա) ժամանակին բրցնելու եւ անկողիններու մէջ փռելու է: Այս ծաղկին հոտը բոլորովին կը ջնջէ լուերը թէ ամառ եւ թէ ձմեռ:

Լուացուած մեղսփսեղեկները նորէն փայլեցնել

Մետաքս թաշկինակները եւ ուրիշ նիւթերը լուալէ վերջ անոնց նախկին փայլը տալու միակ միջոցն է, առատ ջուրի մէջ արարախէժ բաւական մը լուծել խոզանակով եւ կամ սպունգով մը լուացած նիւթին վրայ քսել եւ վրան թուղթ մը ծածկելով ծանրոցի տակ դնելով չորցնել, նիւթը նորի պէս նախկին փայլունութիւնը կ'առնէ:



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՏԱՐԻ մէկ քանի ծնողք կը ինդրեն մենէ դիտել տալ երեք միացեալ թաղերու ընդ. Տեսչին թէ, տղոց խմելու ջուրին ծորակը մաքուր լաթ մը կապուի միշտ, որպէս զի պղտիկները ջուրին հետ մէկտեղ անզգուշութեամբ սխմիւնքի ալ կուլ չիտան:

ՆՈՅՆ թաղի մեր մասնաւոր թըղ-թակցէն կը տեղեկանանք թէ՝ Իճատիէի Բըքի Սըլանիս յորջորջուած Պր. Աշոտի սրճարանի տէմիր պաշ յաճախորդները որոշեր են մէկ մէկ անկողին տանիլ ու հոն գիշերել... Խիստ օգտուին առ-թիւ: (Անունին պէս չքեղ սալօնի մը մէջ, ո՞վ չուզեր պառկիլ. Խ. Ծ.)

ՆՈՅՆ թաղէն մեզ կը տեղեկացնեն թէ իրիկուան ժամը 12ը 5 անցած շոգենաւին մէջ սրամտութեան և պատ-րաստաբանութեան ֆոնիւռ մը բացուած է որուն պիտի մասնակցին ներկարար-ներ, մուշտակագործներ եւն: (Իմացա-ծիս նայելով քօնքուռին առաջին նիւ-թը պիտի ըլլայ՝ բամպակը Ծ. Խ.)

ԳԱՏԸ-ԳԻՒՂԻ մեր թղթակիցը կը հաւաստէ մեզ թէ՝ անցեալ շաբթուան քօրքուզարի և մանսօյիկի վրայ տրուած լուրը պատերուն տակէն սլքտկալով օ-րիորդի մը ականջը հասեր է, որուն հետեւանօք յիշեալ միմոտիս գործիքը ըռաֆէն թռեր դաշնակին վրայ է թա-ռեր...: (Երջանիկ մանաօլին, գիտե՞ր արդեօք թէ օր մը օրիորդներու քաբ-ռիսին պիտի ծառայէր... Ծ. Խ.)

ՆՈՅՆ գիւղէն կիմանանք թէ, մէկ քանի օրիորդներ չորս աչքով և չորս ոտքով առաջին ձիւնին կապասեն ե-ղեր, ձիւնագնդակ խաղալու համար

փողոցները: (Ըրէք եալլում, Բերացի-ները գերազանցելու համար մէկ տո-կը պակսէր... հիմա ամենայն ինչ կա-տարեալ եղեւ... Խ. Ծ.)

ԲԵՐԱ Էրթալօֆօսի ոչ խըման մե-թեթակիցէն կը տեղեկանանք թէ, ան-ցեալ գիշեր մէկ քանի վարժապետներ գլուխին դառնալու աստիճան տաք-ցընելով «յարժամ» մակբայ թէ շաղ-կապ նոյեան հարցին վրայ այնքան վի-ճաբաներ են որ կէս գիշերին խանութին գոցուելով միայն՝ բանավէճն ալ վերջ գտերէ: (Ալքօլը մտքերը կը բանայ կ'ըսեն. Ծ. Խ.)

ՊԱՆՏԸՐԾԱԻ մէջ թերթին գործա-կալ ընտրուած են Մեծ. Թագուոր Էֆ. Չէրչեանը: Անոնք որ ապառիկ թերթ կարգալու բարի(°) սովորութիւնը չու-նին կրնան ուղղակի իրեն դիմելով ըս-տանալ «Հանրագիտակ»ը որ ներկայ եղանակի է՝ն փնտռուած հանգէսն է իր պէսպիսութիւններով:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Հիմա Ա. մամուլը ձեռքերին հասաւ, և տաքը տաքընայ կը պատասխանենք սօխախ սխարիւնքիւ-սիւ ԲԱՆԱԳՈՂ Ալիբարին թէ Հիւան-դանոցը իրեն պէս առաւ փախաւնե-րու գրամին պէտք չունի, այդքան չստորնանար, լաւ կ'ընէ թէ այդ գու-մարով ... Եթէ ունի իր պարաքերը վճարէ, եւ ասանկով անունին շուրջ հինգ փարայի պատիւ ճարէ: avete capito singor! տեսնուինք:

Արտանայի ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատոսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱԹՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անհրապին մասերն եղան մսին, ուղեղին, ժողովրդիկն և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պայիս նոր բերուած այս անշուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և դնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւուր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուռասպառուծիւն, դակիւթիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անշուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և գիշորէից մթերանոցներու քով:

50—19

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՈՅԹԱԿԱՆԱԳ

Արանց, Կանանց և Տղայոց

ՊԻՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և՛ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տնկունութեամբ և գիներու անմիջեղի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմաղ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քեյրոններու և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:


Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—14

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՛ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամփօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՛ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն զժուարհաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղը

ՍԱԿԱՐԿՈՒԹԻԻՆ ՉԿԱՅ

50 - 10

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։